Սևանա լճի փորձագիտական հանձնաժողովի նիստում քննարկվեց Սևանա լճի ավազանում ոչ մետաղական հանքերի խնդիրը

Սույն թվականի հոկտեմբերի 21-ին տեղի ունեցավ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Սևանա լճի փորձագիտական հանձնաժողովի նիստը, որին մասնակցում էին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման և կենտրոնացված մատյանի վարման բաժնի պետ Կարեն Գասպարյանը, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության (ՇՄՆ) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Խաչիկ Մարտիրոսյանը, նույն ՊՈԱԿ-ի գլխավոր փորձագետ Վարդան Հարությունյանը, ՀՀ ՇՄՆ հողերի և ընդերքի քաղաքականության վարչության գլխավոր փորձագետ Կարեն Եպիսկոպոսյանը, ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Ասատուր Վարդանյանը և ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ընդերքի վերահսկողության վարչության պետ Վահան Գրիգորյանը: Քննարկվեց Սևանա լճի էկոհամակարգի վրա ոչ մետաղական հանքերի ազդեցության խնդիրը:

Հանձնաժողովի նախագահ Բարդուխ Գաբրիելյանը նշեց, որ Սևանի ավազանում, հատկապես Մարտունու շրջանում, ոչ մետաղական հանքերը կարող են գումարային ազդեցություն ունենալ «Սևան» ազգային պարկի վրա, լուրջ վտանգ պարունակել լանդշաֆտի փոփոխման, գետերի վերին հոսանքներում կենսաբազմազանության վրա: «Մենք այդ հանքերի գումարային ազդեցության գնահատական չունենք: Գուցե առաջարկենք այս գործունեության ժամանակավոր կասեցում մինչև ռազմավարական ՇՄԱԳ իրականացվի»,- առաջարկեց Բարդուխ Գաբրիելյանը:

Հանձնաժողովի նախագահի տեղակալ, ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն Խաչատուր Մելիքսեթյանը նշեց, որ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գրության համաձայն, Սևանա լճի ավազանում տրված է ոչ մետաղական հանքերի ընդերքօգտագործման 25 թույլտվություն, սակայն տիեզերական նկարներից երևում է, որ միայն Գեղհովիտի բազալտի հանքի տարածքում առկա է 38 մեծ ու փոքր փորվածք 2019թ. դրությամբ, իսկ 2022թ.՝ ավելի շատ: «Ամբողջությամբ լանդշաֆտը վնասված է, անմիջապես Արգիճի գետի հարևանությամբ է, 200 մ է

հեռու գետից: Ձիլ-Արտանիշ հատվածում ևս մի քանի տասնյակ բաց հանք կա»,- ասաց Խաչատուր Մելիքսեթյանը:

ՀՀ ՏԿԵՆ-ի ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման և կենտրոնացված մատյանի վարման բաժնի պետ Կարեն Գասպարյանը նշեց, որ Գեղհովիտի տարածքում տրված է մեկ ընդերքօգտագործման, երեք ուսումնասիրության թույլտվություն:

ՀՀ ՇՄՆ-ի հողերի և ընդերքի քաղաքականության վարչության գլխավոր փորձագետ Կարեն Եպիսկոպոսյանը նշեց, որ նախարարությունը տեղյակ չէ, թե ինչքան հող է խախտվել, ինչ չափով:

Որոշվեց, որ Սևանա լճի փորձագիտական հանձնաժողովը նամակով դիմի ՏԿԵՆ և ՇՄՆ, որպեսզի Սևանա լճի ավազանի համար իրականացվի ռազմավարական ՇՄԱԳ գնահատում՝ պարզելու, թե ավազանում տնտեսական գործունեության տարբեր տեսակները գումարային ինչ ազդեցություն են ունենում Սևանա լճի վրա:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին